



36. ՇԱՔՐՈՒ

Մեկ ժամանակը մ կէլնի մեկ թագաւորը, տղղա չունենար:
Մեկ դավրեշը մ կը գաւ էնոր տուն:

Դաւրեշ ասաց. - Թագաւոր, ես խասկըցեր եմ՝ տաւ տղղա չունիս, ես էնպես պարիք մ'ենեմ, որ Աստված քե տղղեմ տա, որ յոթ տարին թըմըմի, տաւ օրը մ տղ տա՞ս, տանիմ ծի:

Կասա. - Դաւրեշ, վոդաւ էղի իմ ջանին, որ տաւ էնպես պարիք մ'անես, ծի տղղե մ'էղի, յոթ տարուց ետ գաւս, ես տամ, առիս, էրթաս:

Դաւրեշն էլ մեկ խնծար կը խանա, չըրա, չիրը մ տա թագաւորին, մեկ կընգան: Դաւրեշ կը թոնի կէրթա, Աստվածութեն էնոր մեկ տղղեմ կը տա: Յոթ տարի կը մնա, դաւրեշ կը գաւ:

Կասա. - Թագաւոր, ժամանակն ա, տղղեն տո՛ւր, առնեմ, էրթամ:

Թագաւոր չուգեր տալ, բայց խոսք ա տըվեր, չուգեր խոսքից ետ տաննա, կասա. - Դայդե՛, ա՛ռ, տա՛ր:

Դաւրեշ տղղեն կառնի, կէրթա մեկ սար՝ քարիմ հանեծ: Էտ քարի վերեն մեկ տաւը մ կը պագվի, տեսնա տուն կա քարի մեջ, մեկ ճրաքը մ կը վանվի էտ տան մեջ: Տան էրկու կըշտերն էլ կան անթիկա քարեր:

Դաւրեշն էլ տղղին կը պատվիրա, կասա. - Կէրթա՛ս, էն ճրաք կառնա՛ս, կը գաւս, չըպըշքի՛ս էնա քարեր, ծեռ չըտա՛ս հինե:

Տղղեն կէրթա, ճրաք կառի, ամա, տղղա յա, ծեռ կը տա քարեր, քանիմ քար կառի, կը գաւ:

Եփ քարեր կը լցա ջեր, էտ տառ կը փակվի վերեմ: Դավրեշ
կը փախի, կերթա:

Տըղեն էլ շատ կը լն էն տեղ: Էնոր քուն կը տանի, կը մնա էն
տեղ:

Տըղեն օր կը քըղնի, ուր տակ կը ծակվի գյետին, տըղեն կըն-
գի վըր ճըրհուն:

Ճուր կառնի, կերթա տըղային գյետնի տակ վեր: Կը տանի,
մեկ հախապուր վեր կը խանա տառ:

Տըղեն անոթի, ծարավ ընտեղրանք շատ կը լն, կան կը գն:

Մեկ խովիվըմ էն կողմեն օխչար կը պերա:

Խովիվն տըղային կառի, կերթա: Խաց կը կերցուցա, կաթ կը
կերցուցա, կը տանի տուն:

Ուր կընգան կասա. - Էսա տըղեն սար կընդեր եմ, լավ կը
շախես, կը պախես:

Խովիվն էլ կերթա օխչըրի խես: Տըղեն ու կնիկ կը մնան
տուն:

Տըղեն կը տեսնա՝ խովիվու տուն գյեշ, մրոտ ա, կասա. -
Մայրիկ, առ էնա քարեր, տար ծախսա, փարեն պեր, մե ջուլ, պան
կառնք:

Կնիկ քարեր կառի, կերթա չարսուն, օր ծախս:

Կերթա, մեկ վաճառականին կասա. - Էսա քարեր չըս առնի:

Կասա. - Կառիմ, մայրիկ, գյինն ի՞նչ ա:

Կասա. - Տու գյիտես:

Կասա. - Մայրիկ, մեկ քարին տաս օսկի տամ:

Կնիկ կասա. - Աղա՛, վըր ձի մը՝ ծըծղա, ես քու ծըծղելատեղ
չեմ:

Կասա. - Քյե քսան օսկի տամ:

Ասաց. - Դե՛, վըր ձի մը՝ խընդա՛, կառիս՝ ա՛ն, չէ՛ խո թող ես
երթամ:

Ասավ. - Քյեզի տամ քանսուն օսկի:

Կնիկ կասա. - Դե տո՛ւ, տիսնանք:

Մարթն կը տա քանսուն օսկին, կնիկն կառի ուր փարեն, կը
տաննա տուն:

Տըղին կասա. - Մեկ քար ծախեսցի քանսուն օսկի, էլ չըգյի-
տիմ՝ թուլար ծու՛ռ էր, թե քար կաժեր:

Տըղեն կասա. - Օր ետպես ա, էնա մեկէլ քարերն էլ ծախա, փարեն տանք, տուն շինենք, իմ խեր թղխ չէղի խովիվ, թը գա տուն:

Կնիկն էլ կասա, էնոր մարթուն կասա. - Մեր տըղին մոտ քար կա, մեկ քար ծախսեցի քանսուն օսկի, խովվութեն մ'եներ, արի էրթանք, քարեր ծախենք, մեր տներ շինենք:

Խովիվ կը գա տուն:

Տըղին կասա. - Էտ քարերուց շա՞տ կա քու խետ:

Կասա. - Խա՛, տաս-տասնուխինգ քար կա իմ խետ:

Տըղին կասա. - Դե՛, իրեք, չորս խատ մ'էլ տո՛ւր, տանենք, ծախենք:

Տըղեն չորս խատ մ'էլ կը տա:

Խովիվն էլ կասա. - Արի՛ էրթանք, ծի շա՛նց տուր, թե էն թու-ջար վո՞ն ա, օր տու էնոր քար ծախեցիր:

Կնիկ կը տանի, թուջըրի տուքան շանց կը տա:

Մարթն էլ կերթա էնոր մոտ, քարըմ շանց կը տա, կասա. - Էսա քար չը՞ս առնի:

Կասա. - Կառնիմ, ընչի՞ չըմ առնի:

Խովվուն կասա. - Թե շատ ունես էտա քարերուց, պե՛, քյե հեվել գյին կը տամ: Մեկը հիսուն, վաթսուն օսկու կառնիմ:

Խովիվ կը հիմնա, թե էսա քարեր լավ քար են, հեվել գյին կասա:

Կասա. - Մեկ քարին օր խարիր օսկի տաս, կը պերեմ, չը-տաս, չըմ պերե:

Էնտեղ երկու քար կը տա, կառի երկու խարիր օսկին, կը գա տուն:

Կը գա, էնոր շինութեն կը շինա, լավ հագուստներ կառի տըղին, ուր:

Ճրաքյն էլ օր հիրիկուն կը վանվի, չորս մարթ ճրաքյի կը-տըներ կը նըստին, դիվան կենեն, գրուց կը տան:

Ամեն օրն էլ խըլխուն էտա ճրաքյի տեղ տըսնուխինգ օսկի կը տըներ: (Ասենք, թե փար, աներևութ պան են)²⁰:

Վերջ, էտ խովիվ շատ կը զանգըննա, խանութ կը պըռնա: Մեկ տարի՛մ, երկու՛մ, տըղեն կը մնա ըտ տեղ, կապըրվեն իրարու խետ:

²⁰ Ծ.Ա.:

Օրըմ տըղեն կասա. - Ես տ'երթամ իմ հայրենիք:

Կէլնի, ուր ճրաքյ կառնի, կը տա ուր ճամբաձխ, կերթա:

Կերթա ճամբաձխ, կը տեսնա, օր մեկ մարթըմ մեռուկ ա, երկու մարթ էլ, կապ էցկած էտա մեռուկի ոտքեր, կը քաշեն, կը տանեն տեն ու կը պերեն, կը չարչըրեն:

Տըղեն կը խառցընա. - Մեղքյ ա, ընչի՞ տապես կենեքյ:

Կասեն. - Մե փարա կեր էտոր վերեն, չիտուր, մըկա օր մեռեր ա, կը չարչըրենքյ փարի փոխարեն:

Կասա. - Ես էտոր փարեն տամ, առե՛քյ, գանցե՛քյ, էտ մարթ խորեքյ:

Կը խանա, էտոնց փարեն կը տա:

Օսկի մ' էլ կը տա, կասի. - Ես էլ ծեր իրավունքյ, տարե՛քյ, գէտ մարթ խորե՛քյ:

Կը տա խորել, ուր ճամբաձխ կը պըռնա, կերթա:

Կերթա, կը տեսնա, օր մեկ տեղ մ' էլ էտապես մեռուկ մարթըմ կը չարչըրին:

Էնոնքյ էլ ուրենց փարի խամար կը չարչըրեն էտա քանտակ:

Տըղեն էնոնց փարեն կը տա, օսկի մ' էլ կը տա իրավունքյ, կասա՛ տարեքյ, թաղեքյ:

Կը թոնա, ուր ճամբաձխ կերթա: Օր մ' երկու կերթա, կը տեսնա, օր ուր դավրեշ էկավ հանեճ:

Ասաց. - Հա՛յ, լակո՛տ, տաւ ո՞ր տեղն էր, տաւ ինչպե՞ս քարից էլա՛ր:

Էտ էլ դավրեշին կը պատմա ուր գյըլխու գանաճ:

Դավրեշն էլ կը պըռնա, էտոր կը տըլփա, էտա ճրաքյ ու քա՛րեր մոտեն կառի:

Տըղեն օր էտա երկու մեռըլքեր թաղել էր, էտոնց խոգյին կէլնին խրիշտակ, հիսանի կըլըխով կը գան, դավրեշին կը պըռնեն, դավրեշին կը գանեն, տըղի ճրաքյ, փարեքյ, քարեր կառնեն, կը տան տըղին:

Տըղեն էլըմ ճամբաձխ կընգնի, կերթա: Կերթա՛, կը խասնի ուր խոր քաղաքյ, ուր խոր տան հանեճ կը կայնի:

Ծառաներ կը տեսնին, կը գան, տըղեն կառնեն, կերթան սոււն:

Էնոր խեր մանախից խիվընոցեր ա: Օր տըղեն կը տեսնա, կը լավանա:

Տըղեն էլ մեկ քանի՛մ ժամանակ կը մնա էն տեղ:

Խեր կասա. - Իմ տըղեն պըտի կարգեմ:

Կըղանչա ուր վոզիրներուն, կասա. - Ո՞ր ախշիկ լավ ա, պիրեն իմ տըղին:

Տըղեն ընոնց շանց տվածին չըխավմին:

Խերն էլ տըղին կասա. - Էլի՛, գընա՛, քանըքի մեչ, որն օր կը խավմիս, ես էն պիրեն քյե խամար:

Կերթա մեյդան, մեկ աղվեսըմ կը գա հանեմ:

Աղվես տըղային կասա. - Տըղա՛, ինչ կան կը գաս:

Տըղեն կասա. - Տու աղվես ես, ի՞նչ գործ ունես ինձ խետ:

- Ախար տու ձի ասա, ես քու սրտի ուզած տամ:

- Ես մեկ ախշըկե՛մ կան կը գամ, տանեմ փսակվիմ:

Կասա. - Ես քյե մեկ ախշիկըմ շանց կը տամ: Տու գընա՛՛ էնա մեյդան, ոտ գա՛ր գյետին, ասա՛ Զանջին Աջմանդին: Էն գախ խագար ծեն կընգի գյետին: Ասա՛ Զանջին Աջմանդին, բիրինջի լալա: Օր էնպես ասես, մեկ արարըմ կելնի քու անեմ, էնոր հըմեն ատամ խընձ մարթըմ կա, ամա տու չըվախենաս, էն քյե կասա՛ ի՞նչ հրաման կելես: Տու ասա՛ աղվես անջանդին էնոր սանդուխ կուզեր:

Տըղեն գընաց, խասավ մեյդան, ոտ էզար գյետին, ասավ. - Զանջին Աջմանդին:

Գյետնի տըկանց խագար ծեն էլավ:

Մեկ էլ ասաց. - Զանջին Աջմանդին, բիրինջի լալա:

Մեկ էլ տեսավ՝ արար մ՛ էլավ տուս, էնոր հըմեն ատամ խընձ մարթըմ:

Արար ասաց. - Ի՞նչ կուզես, ասա՛:

Տըղեն ասավ. - Աղվես անջանդին ուր սանդուխ կուզա:

Արար էլ կուրիսավ, շոտըմ մեկ սանդուխ մ՛առավ, էկավ:

Սանդուխ խընձ ջըղարի կութի մ՛ա: Պալմիսն էլ խընձ թռվան խաչըմկաթ: Տըղեն առեց, էպեր, էտուր աղվըսուն:

Աղվեսն կութին էտիր գյետին, պալմիս էզար վերեն, ասաց. -

Ճիչցիր:

Սանդուխ ճիչցավ, էղավ մեծ սանդուխ:

Սանդուխ էպաց, մատնիկ մ՛ էխան, սահար մ՛ էխան, էտուր տըղին:

Ասաց. - Օր էտի տանես քիւ խոր մոտ, օր քիւ խեր կը խառցնա, թե էտա մատնիկ վո՞ն ա տըվե քյե, տիւ ասա՝ քիւ ի՞նչ գործն ա: Ձի ախչիկըմ տեսեր եմ, փոխեր եմ մըր մատընկներ, առեր եմ, էկեր եմ:

Տըղեն առեց, էկավ խոր տուն:

Խեր օր տեսավ մատնիկն ու սահնաթ, ասաց. - Տըղա՛, էսի ո՞ր տեղեն ա, որի՞ ախչիկն ես ուզեր:

Տըղեն ասաց. - Քիւ ի՞նչ պետքն ա:

- Ձավա՛կ, չէ՞ ես պիտի հիմանամ՝ քիւ աներոջ տուն ո՞ր տեղն ա, օր էրթանք, խարս պերենք:

Տըղեն էլ մտածեց, խեղճ-խեղճ գյըննաց մեյդան:

Աղվես գինա էկավ հանեմ:

Ասաց. - Տըղա՛, ընչի՞ ես քիւ մաղղեն էրեր, կը մտածես:

Ասաց. - Տիւ ծի խապեցիր, իմ խեր աներոջ տուն կը խառցընա ձենե, ես ի՞նչ պատասխան տամ:

Ասաց. - Էտ խանգիստ ա, գյըննա՛ մեյդան, ոտ գա՛ր գյետին, ասա՛ Դանջին Աջմանդին, իքինջի լալա, խազար ծեն կընգնի գյետին: Տիւս կը գա արարըմ: Արարին ասա թե՛ աղվես անգանդին կասա՛ էնպես կոնախըմ շինեն, օր թագա՛վորի սարեն էնպես չէրի, օր թագա՛վոր վաճ տ՛ամնի ուր վոզիրներ, գա մըսա՛քըր: Փայթոններ հազըրին, թագա՛վորի մարթեր օր կը գան, տանես, խանես վերին հողեք: Էնպես կերակուլներ տընես հանեմ, օր մեկ կերակուլից իրեք պըրտա՛ւճ ուտեն, էն չանախ փոխեք, չանախ մ՛էլ տընեք: Չալղիք, խաղ ասողներ պատրաստեք, օր էնոնք չում հիրիկուն նըստին, չըգիտման, թե մեկ սահնաթ ա նստած, թե կես:

Տըղեն գյըննաց: Ոտ էզար գետին, արար էլնավ հանեմ, աղվեսու խաբըրներ արարին ասաց:

Արար տըղի հանճըվեն կուրուսավ, հրաման էրնց, էտպես կոնախըմ շինվավ:

Տըղեն էկավ տուն, խոր ասաց. - Քիւ վոզիրքեր, քիւ մարթեր, որն օր ունիս, ա՛ռ, էրթանք զիա՛քաթ իմ աներոջ տուն:

Թագա՛վորն էլ ուր վոզիրքեր հավաքեց, առավ, գյըննաց: Գյըննաց մեյդոնի գյըլիխ, տեսավ, օր շենըկըմ կա, էնոր սարից հանվելի լավ:

Փայթոններով էկան հանճաներ, առան, տարան ներս: Կերակուլներ պատրաստեցին: Ամեն չանախից իրեք պըրտա՛ւճ ուտեն,

տենան, օր չանախներ կը փոխփոխեն, ուրիշ կերակուլ կը պերեն էնոնց հանեճ:

Չալիք, մուզուկեք ամեն կողմեն կը չալեն: Տեսան հիրիկուն էկած, չիմացան, թե սահանք մ'ա նըստած, թե կես սահանք:

Հիրիկուն էլան, գինա փայթոնով ճամխեց չում մեյդընը գլըլիխ:

Եփ օր ետ տանցան, թագավոր, վոզիրքեր զարմացան, թե էս ի՞նչ տուն էր, ի՞նչ թագարուք էր, մեր քաղքի մեջ էսպես տուն չընք տեսեր էր:

Թագավոր վոզիրքերուն ասաց. - Աջաք էս տան լաղըփ անուն ի՞նչ էր, դավթըրի մեջ աչկի՛, տես:

Ետոր վոզիրքեր ասին. - Մեր քաղքի մեջ էսպես տուն չըկեր:

Ասին՝ տըղային խառցնեք, բալքի տըղեն գյիտնա, խենք ընոր աներոջ տուն վի՞ր տուն ա, անուն ի՞նչ ա:

Տըղային խառցընեցին, թե քու աներոջ անուն ի՞նչ ա, վի՞ր տուն կասին:

Խեղճ տըղեն էլ չըգյիտեր աներոջ անուն, յան տան անուն:

Ասին. - Տըղա՛, տու պետք ա գյիտնաս, օր մենք պատրաստուբեն տիսնանք, էրթանք, քյե փսակինք:

Տըղեն էլ ասավ. - Լա՛վ, հիրիկուն ծե կասեմ:

Տըղեն էլ խեղճ, մաղղեն էրաց՝ էս էրթամ ի՞նչ ասեմ, ի՞նչ չասեմ, ընչի՞ ծի խապեց էսա աղվես:

Տըղեն էլ խեղճ սեֆիլ, ծեռքեր տըրե ծոց, գյընանց մեյդան, աղվես էկավ հանեճ:

Աղվես տըղին ասաց. - Ի՞նչ կը մտածես, ծեռքեր տըրեր էս ծոց:

Ասաց. - Իմ խեր ծի կը խառցընա, թե քու աներոջ տան անուն ի՞նչ ա, մեկ հիմանանք, էրթանք, քու կնիկ պերենք:

Աղվես ասավ. - Քու ի՞նչ գործն ա, գյընա ասա՝ թ՛ էնոնց խելին պատրաստա, գան, առնեն էնոնց խարս, էրթան: Ու շոտ տառցի՛, արի՛ իմ մոտ:

Տըղեն էլ գյընաց, խոր ասաց. - Դանդո՛, քու ի՞նչ գործն ա, քու խելին պատրաստա, գացե՛ք, խարս պերե՛ք:

Տըղեն էլ տանցավ, գյընաց մեյդան: Աղվես էկավ հանեճ:

Աղվըսուն ասաց. - Քու ասածներ իմ խորն ասի, էկա:

Աղվես տղղին ասաց. - Գյընա՛ մեյդան, ոտ գա՛ր գյետին, ասա՛ Հաջին Աջմադին: Խազար ծեն կընգի գյետին: Ասա՛ Հաջին Աջմադին, իվչընջի լալա: Արա՛բըմ տուս կըլնի, հերեկի ա՛րա՛բ խընծ էնոր ակընջներ չըկա, բայց չըվա՛խեսնաս: Ասա՛ աղվես ա՛ֆա՛նդին կասեր՝ Բա՛րկղիզա՛ խանըմ պատրաստեն, քա՛ռսուն խատ էլ հուրի-փա՛րի խետ՝ տաս սիվտակ ջըլերով, տաս կարմիր ջըլերով, տաս կանաչ ջըլերով, տաս տեղին ջըլերով: Ասա՛ ու տա՛ռցի՛, արի՛:

Տըղեն գյընաց, ոտ էգա՛ր գյետին, ա՛րա՛բն էլա՛վ տուս, աղվը-սու խա՛բըրթյեր ասաց էնու ու տղղեն ետ տա՛ռցա՛վ:

Խոր ասաց. - Պատրաստա՛ քու խելիք, ա՛ռ, գյընա՛, քու խարս ա՛ռ, արե՛:

Թա՛գա՛վորն էլ ուր խելիք պատրաստեց, առա՛վ ու գյընաց:

Գյընաց մեյդընի գյըլիխ, գինա փայթոներ պերին, տարան տուն: Եփ օր գա՛ցին տան մեչ նըստան, կերակուլ կերան, մինչև առավոտուն սազեր գա՛րկին, քյեֆ-ուրախութեն էրին, առավո-տուն խարս պերին էն տեղ՝ Բա՛րկղիզա՛ խանըմ, օր աչքերով մարթ չըկանա թամաշա էնա, լիս մոտեն կերթա:

Քա՛ռսուն խատ հուրի-փա՛րիքյն էլ օր էկան, առան, էկան տուն: Տըղի վերեն փըսակեցին, խաղ ու խաղտուն, ուրախութեն:

Թա՛գա՛վորի կին, ուր ուզած կըխտերով ու խարսն փա՛րինե-րով մեկտեղ նըստած կերակուլ կուտեն:

Եփ օր խարս կազու միս կուտա, օսկըռները կը թա՛լա՛ ուր թեզնիք վեր:

Վոգիրի կըխտերն էլ աչք կը տան էտի, էտա տեսակ կենեն:

Եփ օր խաց կուտեն, կը պըռծին, կէլի, ուր ծեռքեր կը լըվա՛ խարս, ծեռքեր կը ցա՛նա սենյակի մեչ, էնպես օր կը ցա՛նա, անուշ խտըմ կընգի էտա մա՛զա՛լ:

Էտ մեկ վոգիրի ախչիկ, էն էլ էնպես էրաց:

Եփ օր էնպես էրաց, թեզնիք վեր թա՛լա՛ծ օսկըռի մեկ թը-ռա՛վ, տըպա՛վ թա՛գա՛վորի կընգան, գյըլիխ կոտռեց:

Շատ էնոնց վերեն ամչըցան:

Փեսին էլ աղվես ա՛ֆա՛նդին մեկ մորթե ջուլ մ'ա տվեր, ասեր՝ էնա խա՛գյիր քու ջըլերու տակ, թե մեկըմ քյե դու՛շման էղի, քյե չըկանա պա՛ն էներ:

Խարսնիս ցըռված, ամեկ ուր տեղ գյընաց:

Թանգավորի տղղեն ուր ընգերնեքով գանցին, հախալըրի վը-
րեն լըվանցվան: Թանգավորի տղղեն ուր ճըվեր իտու վեր, էնու
ընգերներ էն մորթ տեսան:

Ասին. - Էսա ի՞նչ մորթ ա՛ տաւ խագյիր ես:

Էն էլ ամոթու էխան ուր մորթ, էթալ ոտաց ճամբան:

Եփ օր էնպես էրաց, էտոր կնիկ ուր փանրիքյներով տընեն
էլան եղվընիկ, թըռան, գանցին:

Էրթանլու ժամանակ տուն ասաց. - Շանքոյի սիրտ իմ հետուն
ա, թը գան Կավ-Քուվ, ձի կընդի:

Եփ տղղեն էլ տուն էկավ, տեսնա, օր ոչ կնիկ, ոչ պան տուն
չըկա:

Մոր կասա. - Յո՛ւր ի իմ կնիկ, դա՛ր գանցին:

Մերն էլ կասա. - Էղան եղվընիկ, գանցին:

Տըղեն կասա. - Պան՛ն չասի՞ն հեչ:

Կասա. - Էրթանլու ժամանակ ասավ՝ Շանքոյի սիրտ իմ հի-
տուն ա, թը գան Կավ-Քուվ, ձի կընդի:

Տըղեն էլավ, հիտն գըրնաց:

Մերն էլ ընգավ տղղի հետն, գըրնաց:

Գանցին մեկ օրըմ, էրկու, մեկ սարի՛ն հանեճ մըսաֆըր էղան,
էնտեղ մութըն էտու վերենքյտեր: Էն տեղն էլ հէրըմ կա: Յերի մեչ
մըսաֆըր մտան, մեկ մեճ քանըմ կա հէրի տաւռ, տղղեն էտու ետ,
մտան հինե: Չուճ հիրիկվան սանհաթ էրկըսվին մեր տեսավ, օր դև
մ՛ էկավ:

Տըղեն քըրնուկ ա:

Դև ու մեր փըշու՛ն գրուցեցին տըռան հանեճ:

Մոր սիրտ դևու վերեն ավիրավ:

Մերն էլ դևուն ասաց. - Արի՛, էրթանքյ տուն, տաւ էլ մե պես
պառկիքյ:

Դևն ասավ. - Չէ՛, ես չըմ գըխընար, կը վանխենամ քու տը-
ղից:

Ասավ. - Տաւ դև ես, էնի հիսան ա, ի՞նչ կը վանխենաս, արի՛
էրթանքյ:

Ասավ. - Չէ՛, էն մարթ, օր էսա քան տըվեր ա ետ, էնի շատ
կտրիճ մարթ ա:

- Է՛, - մեր ասաց, - ապա ի՞նչ էնենքյ, ի՞նչ չէնենքյ, ես քյն
շատ կը սիրեմ:

Ասաց. - Տիւ հեսօր գյիշեր եղիր սուք խիվանդ, օր քիւ լաճ ասա՝ քյե ի՞նչ պիտի, տիւ էլ ասա՝ էնա սարու հետև խաղողի հեգյի՛մ կա, երթաս, էն սարի հիտևու հեգիւց խաղող պերես, ես կը ժըրիմ: Օր էն էլ երթա հեգիւց խաղող պերա, Կարմիր դևըմ կա ընտեղ, էն դև կը գա՛, ըզքիւ տըղեն տ՛ ուտա, ես չըխտ տը գա՛մ, ըզքյե առնեն:

Քյընան չում խըլխուն, խըլխուն մերն եղեր ա խիվանդըմ, ծանտըր խիվանդ:

Լաճն էլ կասա. - Ի՞նչ եղավ քյե, հելի՛ երթանքյ, ի՞նչ պիտի, ի՞նչ չըպիտի քյե:

Մերն էլ ասաց. - Ես հեսօր երագ եմ տեսեր, էնա սարի հետև հեգյի՛մ խաղող կա, երթաս, էն խաղող պերես, ես կը ժըրիմ, չէ՛ ես կը մեռնիմ:

Տըղեն էլ էլավ, գյընաց: Տեսավ, օր սարի հետև հեգյի՛մ խաղող կա, շենըկ մ՛ էլ գի հեգիւ գյըլիխ:

Տըղեն գյընաց, մեկ ախչիկըմ կանչեց փանջարից, ասաց. - Տիւ վո՞ն ես, տանցիր, Աստու սիրուն եղի, քանի Կարմիր դև չէկե քյե կերի:

Տըղեն ասաց. - Տիւ ամտըլա՛ չասիր, օր ասիր, ես չըմ երթա, էն դև թը գա՛, խենքյ ի՞նչ տ՛էնա ծի:

Մընաց, տըղեն էլ նստավ ընտեղ, չէկավ:

Տեսավ, օր դևըմ ըն կողմեն էկավ, բարդի ծառըմ տըրեր վեր թիվին ու քանտըկներ շարեր վըր թիվին, կը գա՛:

Դև եփ օր էկավ, ըզտըղեն տեսավ հեռըվանց, ասաց. - Խողածի՛ն, իմ աչիչ հանճըվեն հեռացիր, քիւ մեղքյն էլ չընգի իմ վիգ:

Տըղեն էլ ուր տեղեն հիրար չառավ, մընաց նըստուկ:

Դև էկավ խընդ տըղեն, տըղեն թուր քաչեց, գյընաց հանեծ: Դև փախավ, զինքյ էթալ խոր, քար մ՛առավ վերեն:

Տըղեն էլ գյընաց, թուր մ՛եզար, քար կըտրեց, էճավ, դևու մեչքն էլ կտրեց, երաց երկու կըտոր:

Դև ասաց. - Տըղա՛, մեկ էլ գար:

Տըղեն ասաց. - Չէ՛, մարթու դըրբ մեկ ա, քյե հիրար տո՛ւր:

Դև զինքյ հիրար էտու, եղավ երկու կըտոր, մընաց ուր տեղ:

Տըղեն էլ էլավ, գյընաց ախչըկե մոտ:

Ասավ. - Տիւ ի՞նչ ախչիկ ես ըստա՛:

Ախշիկն էլ էլանվ, էկավ տըղի գըլլիխ պագեց, ասաց. - Ես մեկ հարուստ մարթու մ'ախշիկ մ'եմ, դև էկավ, ծի փախուց, էպե ըստնա:

Տըղեն ասաց. - Էլի՛, քյե ճամխեմ, գըլնա՛, քիւ խոր երկիր:

Ախշիկ ասաց. - Ես միմակ չըմ գըլխընա էրթա, ոտնով էլ տաս օրվա ճամբախ ա:

Տըղեն ասավ. - Դևուն ծի, պա՛ն չըկա՞ Ես հօղեքյ:

Ասաց. - Դևուն երկու ծի կա էնա հօղեն, եթե կանաս պերես տուս, գամես, մարթ խեծի, երկու սահաթ մարթ կը տանեն իմ խոր քաղաքյ:

Տըղեն էլ գըլնաց, երկու ծին հօղից էխան տուս, գամեց, դևու տընեն էլ ինչկանդար թանգագին պաներ կեն, երկու խուռջի էլից, էթալ ծիանքըյներու քամակ, ախշիկ խեծուց վըր մեկ ծիուն, ինք վըր մեկ ծիուն, տըվին ճամբախ, գացին:

Տարավ ախշըկե խոր քաղաքյ, ախշըկե խոր տուս պայա էղան: Ախշկա ախպըրներ, խեր էկան հանեծ, տարան տուն, խընդացան վըրեն:

Տըղին ասին. - Արե՛, մեր ախշիկ տանքյ քյե:

Տըղեն ասավ. - Ախշիկ իմ քուրն ա, ես կերթամ խընդ իմ դանդին:

Տըղեն էլանվ, ծին խեծավ, էկավ:

Էկավ հեգին, խուռջի՛մ խաղող էլից ու առավ, էկավ էնոր մոր մոտ:

Դև օր տեսավ տըղեն գի էկավ, ասավ. - Եսի օր Կարմիր դևու ծեռնեն պըռծավ, զպթի տը գա, ծի էլ տը սպանա:

Մոր ասաց դև. - Էղի սութ խիվանդ էլման, օր կասա՞ քյե ի՞նչ պիտի, ասա՞ էրագ տեսեր եմ, էնա Սև սարի հետև մեկ խնծարի ծառըմ կա, էրթաս ըն խնծարներ պերես ծի, ես կը ժըրեմ: Օր էրթա էն տեղ, ասլան էնոր նաբադարն ուր ծաքյերով: Թե ասլան գէնի ուտա, թի չէ, չարա չէղի էն տըղի խետ:

Դև գըլնաց պաղկըվավ, տըղեն խաղող էղիր մոր հանեծ:

Մեր խաղող կերավ, գինա մախսուս էղավ խիվանդ:

Տըղեն էլ ասաց. - Մարե՛, քյե ի՞նչ պիտիր, ի՞նչ չըպիտիր, չըժըրա՞ր տու:

Ասաց. - Ես էրագ տեսեր եմ, էնա Սև սարի հետև բանջա կա, ըն բանջի մեչ խնծար ա, պերես, ես ուտեմ, օր ժըրիմ:

Տղղեն էլձավ, գյըընձց: Գյըընձց տեսավ, օր սարի հետև բձնղ-
չե՛մ կա, խնծհոր կա մեչ: Գյըընձց բձնղչի մեչ, տեսավ, օր էրկու աս-
լանի ծձքյ էկան հձռեճ, փաթիւթվան ոտներ, խընդորձց գձցից
բձնղչի մեչ:

Տղղեն խուռջի՛մ խնծհոր քձնղեց, տեսավ օր ասլան ընտեխեն
էկավ, կրակ ոտներուց կը թձլձ:

Ասլան էկավ խընծ տղեն, տղղեն թուր քձչեց, գյըընձց
հձռեճ, թուր մ՛էգձր ասլանին, գյըըխիս չուր վիգն էրաց էրկու
տապակ, առավ խնծհորն, էկավ: Էտա էրկու ասլանի ծձքյեր
հընգձն հետև: Տղղեն էլ առավ, էկավ խետ:

Տեսավ, օր տղղեն էկավ, ասլանի ծձքյեր գի խետ, վձխե-
ցավ, ասավ. - Էսի, օր ասլան էլ ըսպանեց, ծձքյերն էպի, ես էլ
պձն՛մ չըմ կենա էնեմ, էլնեմ, թոնեմ էրթամ:

Դև էլձավ, տ՛ էրթեր, մեր ասաց. - Մ՛էրթձ, տեսնանքյ, արի
ճարե՛մ կընդիքյ էտր:

Դև ասաց. - Թե կանաս էնոր աչքեր խանես, չըխտ ես կը
գձմ, չէ, չէղի՛ր, ես չըմ գյըըխընձ գձմ:

Մեր ասաց. - Ապա ի՞նչըխ աչքեր խանեմ, ի՞նչըխ էնեմ:

Ասաց. - Ա՛ռ էնա միլ քիւ խետ, եփ օր կը քյընի, թձլ, աչքեր
խան:

Տղղեն էլ էկավ տուն, խնծհորներ էպե, մեր կերավ, ծիմ էլ
տարավ, կապեց, արածաց, ասլանու ծձքյերն էլ գձցից ծիու
մոտ:

Գյիչեր տղղեն քյըընավ, մեր միլ էթձլ, գաչքեր էխան:

Խըլիսուն մեր էլձավ, դևուն կանչեց, ասաց. - Արի՛, աչքեր
խաներ եմ, տղրեր եմ ջեբեր, արի տար, ի՛նչ կէնես, էրա՛:

Դևն էլ էկավ, գոտներ պըռնեց, տարավ էթձլ խոր ըգտղղեն:

Դևն ու էնու մեր գձցից էնոնց քյեֆի խետ:

Էտա ասլանի ծձքյերն էլ կէրթան, թե կաքձվ էղի, թե խաց
էղի, կը թձլեն էտա խոր վեր, տղղեն կուտա:

Մեկ քձնի՛մ ժամձնակ կը մնա էտպես տղղեն խորի մեչ:
Մեկ օր տղղեն լսավ, օր ուր կըշտեն խըփըսթոցըմ կը գձ, տղղեն
ծեռ կան ածուց, աղվես մ՛իցնգձվ ուր ծեռ, պըռնեց գաղվես:

Տղղեն ասաց. - Աղվըսու պոչ պըռնեմ, խեմ աղվես ծակըմ
վեր ծի չըխանե՞ր տիւս, հձլքձթ տեղըմ վեր էկեր ա:

Տղղեն աղվըսու պոչ պըռնած, հիտև աղվըսու կէրթա:

Աղվես տարավ, չու՛մ սահա՛նք մը ճանապարհ գյետնի տակը վեր, ըզտըղեն էխան տաւս:

Տըսու շա՛վեն եզար տըղի իրեսնը վեր, տըղեն ափըլփեց գյետին, հիմացավ, օր տաւսն ա, գաղվես էթող, գըննաց:

Մեկ, թե օր մ'երկու տըղեն մընաց ըն տեղ նըստուկ:

Մեկ օր տըղեն լսավ, մեկ բա՛զըրգան մ'էկավ, գանգա՛նկի ծե-
ներ, կալաբալաղ տըվի վերեն, կը գա՛: Բա՛զըրգան օր էկավ, ճան-
բա՛խ վեր տ'ընցըներ, տըղեն էլ բաշլայեց խաղ ասել, բոռալ:

Բա՛զըրգանի տերն էլ ասաց. - Գա՛ցե՛քյ, խենքյ էնա ի՞նչ
մարթ ա, նըստեր խաղ կասա:

Գա՛ցին օր տեսան մեկ կոր, ա՛լիլ մարթըմ նըստեր ա ըտեղ:

Կը գա՛ն, բա՛զըրգանի մեծին կըսեն, թե՛ կոր, ա՛լիլ մարթ մ՛
ա, նըստեր ա ընտեղ:

Բա՛զըրգանի մեծ կասա. - Գա՛ցե՛քյ, պերե՛քյ, առինքյ
էրթանքյ մեր խետ, խեղճ ա, մեղքյ ա:

Կէրթան, կը պերին:

Բա՛զըրգաններ կէրթա՛ն, մեկ հա՛խպըրի՛մ վերեն էնոնց
պեռներ կը թա՛լեն, կը նըստին էն տեղ:

Բա՛զըրգանի մեծ կը խառցընա, թե՛ ի՞նչ ա էղեր քու աչքեր,
ա՛մլա՛ էնտեղ ինչ կէներ:

Էն էլ կը պատմա ուր գըլխու գա՛լա՛ծ:

Բա՛զըրգան կաչկա էնու ջերքեր, աչքեր գի ջերքեր:

Էն էլ աչքեր կը խանա, տընա ուր տեղ, տըղեն էլ ծեռ կը տա
ուր ջեր, էն պերած խնձիրներուց էրկու խատ գի ջեր, թոռմըճեր,
կը խանա:

Թաւջար կը խառցընա. - Էտա ի՞նչ խնձիր ա քու ջեր:

Էն էլ կը պատմա:

Թաւջարն էլ կառի, կը տընա ճըրաւ մեչ, կը կակղըցուցա
էտա խնձիրներ, կը քըսա վըր աչքերուն, աչքեր կը ժըրի:

Թաւջարն էլ տըղին կասա. - Արի՛, քյե տանեմ իմ խետ:

Տըղեն կասա. - Չը՛մ իգա՛ր, դա՛ռդ կա ծի, կէրթամ հիտև իմ
դա՛ռդին:

Թաւջար կէրթա: Տըղեն էլ կէլնի, կէրթա էն հեր խեմ՛ իմ մեր
ու դևն ընտեղն են, թե՞ էն տեղ չեն:

Կէրթա, օր տեսնի գի էրկուսն էլ էն տեղ հեր վերն են:

Դև կէլնի, օր փախի, տըղեն կասա. - Չէ՛, մը՛ փախիր, ես քյե պան չըմ էնե, տու ծի պան չըս էրեր:

Դևն էլ կանի ընտեղ: Տըղեն կերթա, ըզթուր կառի, մոր ոտներ, ծեռքեր կըտրա, թալա ընտեխ: Կէլի, կերթա խեմ՝ իմ ծին ի՞նչ ա էղեր:

Կերթա ծիու մոտ, կը տեսնա, օր ծին կապուկ ա: Էնոր կապած տեղ էնքան ա էնու կըշտըներ կան էկեր, օր գյետին էղեր ա թոզ, ծին չու՛մ էնու ծընգվեր խըթվեր ա մըչ թոզին:

Էտա ասլանի ծաքյեր տիրած ան, չըն թողած ջաննավարըմ գան մոտ, յան մարթ գան տանի, ամա՛ ծին անոթնե կողիւմ չըկա, օր քյելն:

Էն էլ կը տաննա վըր դևուն, կասա. - Արի՛, քյե պան չըմ էներ, իմ ծին տընիս վըր քու թկին, առինքյ, էթանքյ ասլանի բանչեն:

Դևն էլ կը գան, ի՞նչըխ մարթ ուլըմ տըննա ուր թկին, տըննա ուր թկի վըրեն, կառնի, կիյա ասլանի բանչեն: Ծին կը թոնին բանչեն, ասլանի ծաքյերն էլ թոնի բանչի մեչ ու ինքյ, տըղեն կը տա ճանթախ, կերթա:

Կերթա, մեկ տանշտըմ կը տեսնա, օր վարանըմ գարկուկ էտ տանշտի մեչ:

Քանի օր կերթա, էտա վարան ուր աչիչ հանեծեն կեռանա:

Էն էլ կասա. - Յերեկ նըստիմ, գյիշեր էրթամ, խեմ ի՞նչ վարան ա, օր իմ հանճըվեն կը փախի:

Յերեկ կը քյընի, գյիշեր կերթա, կը խասի: Կը տեսի, օր գան չըկա վարանի մեչ, տանտակ վարան:

Կասա. - Պառկիմ ըստն, քյընիմ, խանգստանամ չու՛մ առատուն: Գալթաք էսա վարանին տերըմ կա:

Խըլիսուն կը տիսնա, օր իրեքյ մարթ էն կողմեն կը գան: Էլ հիրարու կը գանեն ու կը տըփեն, կը գան:

Կը խառցընա. - Ընչի՞ իրարու կը գանեքյ:

Էնոնքյ էլ կասեն, թե՛ մեր խեր մեռեր ա: Էնու մալի վըրեն կը կըռվինքյ, քյար չընքյ ինգիր:

Էտ էլ կասա. - Էկեքյ, ծի քյար ըցկեմ, ծեր խոր մալ ի՞նչ ա, պերեքյ մեչտեղ:

Ընոնքյն էլ կասեն. - Մեր խոր իրեքյ պան կա, մեկ աներուութ գըլխանոց, մեկ սուֆրա ա, մեկն էլ սըջանդա ա:

- Լավ,- կասա,- են գյուլխանոցի մարիֆաթն ի՞նչ ա, են սուֆ-
րի ու սըջանի մարիֆաթն ի՞նչ ա:

- Էսա գյուլխանոց տաւ տընես քաւ գյուլիխ, էլ մարթ քըե
չըտեսներ: Էնա սուֆրեն օր տընես քաւ հանեճ, ի՞նչ ուզես, կը գա
մեչ, կուտես, էնա սըջանդեն էլ, օր նըստիս վըրեն, ասիս՝ սըջանդա՛,
ծի առ, տար, դի՛ր ուզես, քե կառի, կը տանի դեն:

Կասա. - Շա՛տ լավ, գանցե՛ք, իրեքը քա՛ր պերե՛ք, տըվե՛ք իմ
ծեռ, ծե ասեմ:

Իրեքը քա՛ր կը պերեն, կը տան տըղի ծեռ:

Տըղեն էլ ըգքա՛րեր կը թալա, կերթան, կընգնին սարի տակ:

Էն ասաց. - Դե որ շոտ էրթա, քա՛ր մ՛առի, գա՛ ըստա, ո՛ր մեկն
ուզա, կը տամ էնոր:

Էնոնք գանցին քա՛րերու հետև, տըղեն նստավ վըր ծածկո-
ցին, սուֆրեն իղիր գիքը, գյուլխանոց իտիր գյուլիխ, ասաց, - Քյենե
կուզեմ, ծածկո՛ց, ծի տանես Կավ-Քուվ երկիր՝ Բա՛րկղիզա խանը-
մի մոտ:

Աչք խփեց, եպանց, էճա՛վ Բա՛րկղիզա խանըմի տան հանեճ:

Էն գյուլխանոց գի գյուլիխ, մարթ գէնի չըտեսիր: Տեսնա, օր
Բա՛րկղիզա խանըմ պերած են, կը կախեն:

Էն էլ թուր մ՛ էթալ, չըվան կտրեց: Էտա կախողներն էլ գա՛ր-
մացան, թե չըվան ընչի՞ կտրավ:

Ասին. - Վնաս չըկա, անգամ էլ կախենքը:

Կախեցին, դի՛ր մ՛ էլ թուր էթալ, կտրեց:

Ասին. - Ջա՛նըմ, էսի մարթ կա, կը կտրա, չըվանի վըրեն
կտրելու տեղ կերևա:

Կասեն. - Աներևուք գյուլխանոց կա էսա կտրողի գյուլիխ,
մենք չընքը տեսնա, էնի կը կտրա:

Կանչեն կասեն. - Մա՛րթ, տաւ վո՞ն ես, ի՞նչ ես, ի՞նչ ես,
ջը՞նս ես, փա՛րի՞ ես, ծեն տուր:

Ասաց. - Եսն եմ, ընչի՞ էտա ախչիկ կը կախեքը, ծի ասեքը, օր
էլնիմ հերևան:

Ասին, թե. - Էսա ախչիկ գանցեր, մեկ տըղե՛մ խապեր, առեր,
ըգտըղեն թողեր, էկեր: Տըղեն էլ էկեր ա հիտև էնոր: Խը ճամխին
շատ նեղութեն ա ընգեր: Տըղի մեղաց մեր երկիր կրակ կը թափի,
էսա ախչիկ տը կախենքը:

- Է՛,- կասա,- մըկա օր տըղեն գա՛ն ըստա՛ն, գախչիկ չը՞ք կախի:

Կասեն. - Չէ՛, ուխտ եղի, մընք պան չենենք:

Տըղեն էլ գյըլխանոց կառի, կը տընա՛ն ծոց, կերևա:

Ընտեղ ախչիկ տըղին կը ճանչընա, տըղեն՝ ախչըկեն: Ետ հարեք, ինչ օր խընդ ախչըկեն են, կը տանեն, ըգտըղեն պատիվ կը պըռնեն:

Թե տաս օր, թե քսան օր հիրարու խետ քյեֆ-ուրախութեն կենեն:

Տըղեն էլ ախչըկեն կասա. - Դե՛, էլի՛, երթանք մեր երկիր:

Ախչիկ կասա. - Ես կանամ եղիմ եղվընիկ, թըռիմ, տա՛ն ի՞նչըխ տ՛իյաս:

Տըղեն էլ կասա. - Ես էլ խանգիստ կերթամ:

- Տա՛ն ինչպե՛ս տ՛երթաս:

Տըղեն էլ կասա. - Ծածկոցըմ կա ձի, օր թե նըստիմ վըրեն, ասիմ՝ ձի տար իմ խոր տուն, ձի կը տանի ըն տեղ:

Տաննա, տըղեն կը խառցընա. - Տա՛ն ընչի՞ ձի թողիր, էկար, ես էկա, ճամխըներ էնքան նեղութեն քա՛շիցի:

Կասա. - Էն մորթ, օր աղվես ա՛ֆանդին էտուր քյե, տա՛ն թա՛լեցիր ոտաց ճամբա՛խ, ես էլ հըռըկա, թողի, էկա:

Էն ու ախչիկ դարիս կը նըստին ծածկոցը վեր:

Կասա. - Ծածկո՛ց, ձի տանես էն ախչըկե խոր տուն, օր ես դեուց ազատեցի, տարա ուր խոր տվի:

Աչք խփին, պանան, կը գան վաճառականի տա՛ն կե՛ծին:

Կերթան տուն, մըսաֆըր կեղին: Ախչիկ օր էն կը տեսնի, հիրարու վըրեն կը խընդանան:

Ընտեղ վաճառական շատ էնոնց պատիվ կը պըռնա, քանի՛մ ժամանակ էն տեղ կը մնան:

Ըն տեղեն կելնին, վաճառականից քանի՛մ խատ թանգագին պաներ կառին, կը գան: Կը գան, քաղքյեն կելին, կը նըստին ծածկոցը վեր:

Կասա. - Ծածկո՛ց, ձի տանես ասլանու ծա՛քյերու մոտ, իմ ծիուն:

Աչք խփեն, պանան, բաղչի մեչ կե՛ծին: Տեսնա, օր ծին լացե՛ր, էլեր ա հառճին ծին: Ասլանի ծա՛քյերն էլ մեծոցած: Ընտեղ

կելին, երկուս ըզծին կը խեծին ու ասլանի ծանջեր հետև կառին,
կը գան խոր տուն:

Նորեն խեր, ուր վոզիրներ կերթան հանեծ, կը պերեն, խինգ-
վեց օր ուրենց քեֆ-ուրախութեն կենեն:

Երկնուց իրեք խնձիր կընգի, մեկ ասողին, մեկ լսողին, մեկն
էլ չըլսողին:

